

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՆԼԵՊ, 4 ԱՊՐԻԼ 1931

ԹԻԻ 6

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀՈՍԱՆՔՆԵՐ

Տ. Ճ. Խ.

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՏԿԱՐՈՒԹԵԱՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

ՎԵՐ. Մ. Կ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՏՐ. ՀԵՐՐԻ ՐԻՄԻՏ

ՎԵՐ. Կ. ԱՏԱՆԱԼԵԱՆ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԻՆ ՊԱՏԳԱՄԸ

ՓՐՈՖ. Զ. ՊԷԶՃԵԱՆ

ԿԱԹ

ՏՈՔԹ. Ֆ. ՅՈՎԱՆԵԱՆ

ԻՆՇԻ ՀԱՄԱՐ

Հ. Օ. ՊՕՂՈՍԵԱՆ

ՄԵՐ ՊԱՐՏՔԸ ԱՍՖՈՒՐԻՅԷԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻՆ

ՎԵՐ. Ս. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՊԱՏԳԱՄՆԵՐ ՍԹԱՆԼԻ ՃՈՆՍԷ

ԹՐԴՄ. Յ. Մ. ՀԱԼԷՊԼԵԱՆ

ԴՐԻՍՏՈՍ ՄԵՐ ՕՐԻՆԱԿԸ

ՎԵՐ. Ե. ՔԱՍՈՒՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ԲՐՈՆԻԿ

ՔԱՂԵՑ Հ. ՓՕԼԱՏԵԱՆ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ՎԵՐ. Ս. ՄԵԼԴՈՆԵԱՆ

ԱԻԵՏ. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ ԳՈՂԵՃ ՀԱՆԼԵՊ

ՆՈՐ ԱԻԵՏԱԲԵՐ

Արսունասէր՝ Վեր. Կ. Յարուսթիւնեան
Խմբագիր՝ Տիգրան Ճ. Խրոյրեան

Կը հրատարակուի ամիսը երկու ան-
գամ, տարեկան բաժնեգրին 150 զրուշ
սուրի Սուրբոյ համար, և մէկ ու կէս
տուր՝ ուրիշ բոլոր երկիրներու համար:

Յօդուածներու բնագիրները չեն ղըր-
կուիր էթէ այդ մասին փափաք չյայտ-
նուի յօդուածագիրներու կողմանէ. չհը-
րատարակուող յօդուածներու համար
պէտք է ղրկել փոսթի ծախսը:

Յօդուածները պէտք է գրուին թուղ-
թին մէկ էջին վրայ մեկանով, ղիւրըն-
թեռնի և մաքուր կերպով:

Բաժանորդներէն կը խնդրուի առա-
ջին առթիւ յայտնել իրենց նոր հասցէն
երբ փոփոխութեան ենթարկուի ան:

ԶԵՐ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ ՏՈՒՆԻՔ
«ՆՈՐ ԱԻԵՏԱԲԵՐ» ԻՆ

ԾԱՆՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պատահական ծանուցումներուն հա-
մար իւրաքանչիւր տղին գինն է 10 զրշ.
սուրիական. վեցամսեայ և աւելի եր-
կարատե ծանուցումներու պայմանները
հասկնալու համար ղիմել «Նոր Աւետա-
բեր»-ի, B. P. 287, Alep.

ԳՐԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ

“ՆՈՐ ԱԻԵՏԱԲԵՐ”-Ի

1931 ի առաջին զրական մրցումին
մասնակցած են հետեւեալները.

Պր. Բաֆֆի Տիքիճեան,

Օր. Անժէլ (ծածկանուն)

Պր. Պէրնարտ Գալֆահան,

Պր. Սարգիս Գալֆահան,

Պր. Զաւէն Մաթոսեան,

Պր. Երուանդ Լոշխանեան,

(վերի վերջին երկուքը 11-12 տարեկան)

Պր. Լեւոն Պապիկեան,

Պր. Ժիրայր Սարեան,

Պր. Ներսէս Նալպանտեան

Բոլոր վերոգրեալները Հալէպէ են.
ընդունած ենք նաեւ գրութիւն մը Սե-
ւանիկի Կիւլպէնկեան վարժարանի մէկ
աշակերտէն, որուն անունը ղժբաղա-
բար չկրցանք կարդալ. Այս գրութիւն-
ներէն ութը հաւեր միայն պայմանները
կը լրացնէին. հետեւաբար միայն անոնք
քննիչներուն յանձնուած են: Ասոնցմէ
հինգը ինքնատիպ պատմուածքներ
իսկ երեքը թարգմանութիւններ էին:
Մրցանակները շահած են՝

Պր. Սարգիս Գալֆահան, Ա. մըր-
ցանակ, 300 զրուշ սուրի.

Պր. Պէրնարտ Գալֆահան, Բ. մըր-
ցանակ 200 զրուշ սուրի:

Պր. Լեւոն Պապիկեան Գ. մըրցա-
նակ, 100 զրուշ սուրի:

Զահոդները իրաւունք ունին կէս
գինով մէկ տարուան «Նոր Աւետաբեր»
ստանալ կանխիկ վճառումով:

ՄՏԱՑԱՆՔ

MASSIS, (Մասիս) անգլիերէն ամ-
սաթերթ, Գ. Տարի թիւ 5, խմբագիր՝
Արշակ Սաֆրաստեան. տարեկան բաժ-
նեգրինն է 12 չիլին. հասցէ՝

“Massis”, 118 Fellows Road,
London, N. W. 3.

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 4 ԱՊՐԻԼ 1931

ԹԻԻ 6

ՀՈՍԱՆՔՆԵՐ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՉ

Ասկէ առաջ այս սրենակներուն մէջ կրկնուած է թէ աւետարանական շարժումը Հայերուն մէջ ծագում առած է իբր բարեկարգչական հոգեւոր ազդակ կրօնական շարժում մէջ, թէ անոր մէկ զարու պատմութիւնը պէտք է այս տեսակէտէն զիտել և անոր համեմատ զնահատել զայն, թէ ներկայիս անոր գոյութիւնը անհրաժեշտ է միայն այս նպատակին իրականացումին համար:

Ուրախալի է զիտել թէ այս պիտակցութիւնը օրէ օր աւելի կը զօրանայ. այսինքն թէ Հայ Աւետ. Եկեղեցին ունի որոշ և վստահ նպատակ մը, որով մէն աւետարանական Հայը պէտք է առգործուած ըլլայ: Բայց որպէսզի ան կարենայ իր այս գաղափարական իրազօրծել պէտք է իր բոլոր ոյժերը միացնէ և հաստատ քայլերով ընթանայ:

Ներկայիս կան այնպիսի շարժումներ, որոնք աւետարանականութեան ոյժը բաժնեկու հետեւարար զայն տկարացնելու միտում մը ցոյց կուտան: Ծանօթ է Գահիրէի Հայ Աւետ. Եկեղեցին զժողովութիւնը, որ անպատեհօրէն հրապարակուեցաւ զանազան թռուցիկներով և թերթիկներով: Գահիրէի գէպը՝ միայն հրապարակեց թէ Աւետ. Եկեղեցին մէջ կան իրարմէ բոլորովին տարբեր երկու հոսանքներ, որոնք՝ ոչ թէ հիմա՝ այլ նախապատեհաբար միմեան չընտանիս արդէն սկսած էին ծագում առնել: Ասոնցմէ առաջինը ազգայնական և երկրորդը՝ վարդապետական բնոյթ ունի:

Այս երկու հոսանքներն ունին իրենց

հետապնդած որոշ, իրարմէ տարբեր նպատակները, որոնք զարմանալի գուրդալիցութեամբ մը Եփրատոսի մէջ միացած են: Այս երկուքն ալ, սակայն, կրնան օգտակար պատգամներ ունենալ, որոնցմէ օգտուելու համար՝ պէտք է անոնց մօտենալ արժէքները զնահատելու պատրաստ լայնամտութեամբ մը:

Այս թիւով կը հրատարակենք Վեր. Ս. Մելգոնեանի բաց նամակը, որ գրեթէ կը ցոյցնէ վարդապետական հոսանքին բնոյթը, նպատակը, տեսակետը: Վեր. Ս. Մելգոնեան իր նամակովը կը շօշափէ երկու կարևոր կէտեր, Աւետ. Եկեղեցին հաւատոյ հանգանակը և Աստուածաբանական դպրոցը:

Սուրբոյ Աւետ. Միութիւնը դաւանական հարց ունեցած չէ եւ ներկայիս ալ չունի և պէտք ալ չի տեսներ դաւանական հարց մը արծարծելու, քանզի անոր դաւանանքն է այն, որ ընդունուած էր Կիլիկիոյ Աւետ. Միութեան կողմանէ: Ներկայիս Սուրբոյ Միութիւնը այնքան հաստատ է իր դաւանանքին վրայ որքան էր Կիլիկիոյ Միութիւնը անցեալին մէջ. և ոչ մէկ պատճառ կայ անոր մէջ պզտիկ փոփոխութիւն մ'ըսկ կատարելու: Բայց ցաւալի է որ արուեստականօրէն դաւանական հարցեր ստեղծելու փառքի կը կատարուին: Շատ յարմար է որ այս հաւատոյ հանգանակը անգամ մը ևս տպագրուելով բոլորին ցրուի:

Վեր. Ս. Մելգոնեան երկրորդ կէտին մէջ կը զրգոէ հոգեւոր գործիչներու պատրաստութեան հարցը և ուշադրու-

թեան կը յանձնէ Աթէնքի Կրօնի Դպրոցին (The School of Religion) գերբատոր մէջ: Ասիկա շատ կարեւոր է մեր եկեղեցիներուն թէ ներկայ եւ ապագայ կեանքին համար: Բայց կ'ուզենք հոս հետեւեալ կէտերը ներկայացնել այս մասին յստակ դադափաբ մը ունենալու համար:

Աթէնքի Կրօնի Դպրոցին հիմնարկութեան մէջ մեծ դեր ունեցած են Տր. Ծ. Կուտսէլ, դպրոցին առաջին նախագահը, Վեր. Է. Փայ, ներկայ նախագահը, և փրոֆ. Լ. Լեւոնեան փոխ նախագահը և ուսուցչապետը: Կրթական ուժէ հաստատութեան արժէքը կ'որոշուի զայն վարող և անոր մէջ դասաւանդող անհատներու անձնաւորութեամբը: Եւ անոր համար յիշեցինք վերի անունները: Տր. Կուտսէլ Մարաշի Աստուածաբանականին նախագահն էր. Վեր. Է. Փայ Մարզուանի Աստուածաբանականին մէջ երկարատեան դասաւանդած էր. փրոֆ. Լեւոնեան նախկին Կ. Թ. Գուլճի փրոֆէսորներէն էր, որ իբր հոգեւոր խորունկ փորձառութեան տէր մէկը բոլորին անվերապահ վստահութեան և յարգանքին արժանացած էր, և ատեն մը՝ երբ Անգլիա ուսում առնելով վերագարձած էր՝ Այնթապի Բ. Աւետ. Եկեղեցիին ընդ վարած է: Պէտք է աւելցնել նաև թէ հաստատութեանս մէջ բուն աստուածաբանութեան իբր դասագիրք կը գործածուի Տր. Քլարքի գիրքը, որ երկարատեան Մարաշի Աստուածաբանականին մէջ գործածուած է:

Կ'երևի թէ դպրոցին անունը ոմանց մէջ թիւրիմացութեան պատճառ կը դառնայ: Ասիկայ Կրօնի Դպրոց կոչուած է, ոչ թէ անոր համար որ ան աստուածաբանական դպրոց մը չէ, այլ՝ անոր համար ան աստուածաբանական դպրոց է և առաւել ուրիշ բան: Այս հաստատութիւնը կը պարունակէ երեք գատ ճիւղեր, որոնք են՝ աստուածա-

բանութիւն, կրօնական դաստիարակութիւն և ընկերային ծառայութիւն: Իւրաքանչիւր ճիւղ ունի իր որոշ դասընթացքը, զոր աւարտողը կ'արժանանայ մասնաւոր վկայականի:

Սուրիոյ Աւետ. Միութիւնը ծանօթ էր Կրօնի Դպրոցին ուսումնական ծրագրին և անոր փրօֆէսորներուն: Հետեւաբար առանց վերապահումի՝ իր կողմէն հոն ուսանելու համար աշակերտներ յանձնարարած, անոնց բարոյանքն և նիւթապէս օժանդակած և ապա իր դաշտին մէջ գործելու համար զանոնք հրաւիրած է: Պէտք է զգուշանալ գաղտնի կերպով կամ հրապարակաւ այս դպրոցին անունին՝ ձրի պիտակներ փակցնելէ, որոնք իրականութեան հակառակ են:

Կարեւոր կէտ մը կայ, սակայն. որ պէտք է նկատի առնուի: Անուրանալի է որ գիրքերը և դպրոցները մեծ բաժին ունին ուսանողին կեանքն ու միտքը ձեւակերպելու մէջ: Բայց սխալ է ըսել նաև որ մէկուն քրիստոնէական ուղղափառութիւնը կ'որոշուի միայն իր կարգացած գիրքերով ու յաճախած դպրոցով: Պահպանողական դպրոց մը կրնայ աշակերտ մը նպատակաւ ըլլալով գոլըս ելլել, և ազատական կոչուած հաստատութենէ մը կրնայ մէկը պահպանողական ըլլալով գոլըս գալ: Հետեւաբար, առանց նկատի առնելու թէ գործիչ մը որ դպրոցին ուսումնաւարտն է, պէտք է իրաւաստւ մարմնի մը կողմանէ հաստատուի թէ ան առողջ հոգեւոր կեանք և ուղղափառ դաւանանք ունի, իր գործին ձեռնարկելէ առաջ: Հոս համամիտ կը գտնուինք Վեր. նամակագրին հետ թէ յարմար է որ Աթէնքի Կրօնի Դպրոցը պաշտօնապէս արտայայտուի այս մասին թիւրիմացութիւնները փարատելու համար:

Ազգայնական հոսանքի մասին յաջորդել:

Տ. Ծ. Խ.

ՏԿԱՐՈՒԹԵԱՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Կրեց՝ Վեր. Մ. Կ. ՓԱՓԱԶԵԱՆ

«Յորժամս իկարսման, յայնժամս զօրսման:»
Բ. Կորն. 12. 10:

Տկարութեան զօրութիւնը: Ո՛չ թէ զօրութիւն՝ ի հեճուկս ակարութեան, հապա տկարութեան մէջ, տկարութեան պատճառով, տկարութեան միջոցով զօրութիւն: Խօսքը ականջին օտար, զըրեթէ անիմաստ կը հնչէ: Արդարեւ քերականութեան և ճարտասանութեան օրէնքով հակասական է ըսել թէ միեւնոյն տառն տկար և զօրաւոր կրնանք ըլլալ: Սակայն մեր բառարաններուն մէջ աւանդուածէն տարրեր լեզու մը կայ, հոգիին, հաւատքի, Աստուծոյ լիզուէն, որուն կանոններով ներկի է ըսել թէ տկարութիւն կայ որ զօրութիւն է, որպէս զօրութիւն ալ կայ որ տկարութիւն է: Թանձրացեալ գէպքի մը նայինք: Ահա՛ մեր առջև կը կանգնի Մեծ Տարսու նացին: Անոր կենսագրականը՝ վիշտերու, տառապանքներու, խռովութիւններու, աշխատութիւններու, հսկումներու, ծովերու անընդհատ շարք մըն է: Այսու ամենայնիւ մարդը ոչ միայն վըհատիլ, յուսահատիլ չի գիտեր, հապա այդ բաներու մէջ յաղթական իսկ կը հանդիսանայ: Երբ որ տկար է, այն տառն գերազանցապէս զօրաւոր կ'զգայ: Գաղտնիքը իր Փրկիչէն սորված էր որ նա ինքն «թէպէտ խաչուեցաւ տկարութեամբ, բայց կենդանի է Աստուծոյ զօրութեամբ:»

Ուէ նիւթական քաջագործութիւն երեք պայմաններէ կախում ունի, — նըպատակ մը, ոյժ մը, և կամք մը: Ուր որ ասոնք համերաշխաբար կը միանան, հոգ մեծ գործ մը ի ցոյց կուգայ այնքան ստուգապէս որքան քաջ որսորդին պրկեալ աղեղէն արձակուած նետը կը վարնէ նշանառութեան առարկան:

Հոգեկան աշխարհին մէջ յաջողութեան աս ծանօթ պայմանները բնաւ չեն փոքր: Աղեքսանդր ոմն՝ իր հանճարը ու կամքը փոքր բանակի մը ետե գնելով, իր օրուան աշխարհը կը նուաճէ: Սակայն, եթէ ձեռնարկուի Բրիտանի իշխանութիւնը տարածել երկրի վրայ՝ Անոր սկզբունքները հաստատելով ընտանիքի մէջ, գործարանին մէջ, սակարանին մէջ այն պարագային սուսերը եւ նիզակը, հրացանը եւ թնդանօթը, ծաղրելի գէնքեր կը գառնան: Ամերիկացի ոմն հնարիչ ուղեղի մը եւ պարտ քսակի մը միացեալ ոյժերուն շընորհիւ իր գործարանին մէջ օդանաւերու տորմիզ մը կը շինէ: Կազմակերպեալ կրօնքին պաշտօնը շատ պիտի դիւրանար՝ եթէ կարելի ըլլար Ֆրոտի աշխատանոցին օրէնքներով վարել գայն: Այն ատեն միլիոնատէր գանձապահ մը եւ ամպլոնին ետեւը քարոզիչ մը պիտի բաւէին ամէնէն վասոյժ եկեղեցին կարճ ժամանակի մէջ փառաւոր յաջողութիւն մը կացուցանել:

Յայտնապէս Աստուծոյ թագաւորութիւնը այդ ուղիով չպիտի գայ: Մարդկային ոյժը տէրունական կամքին լըծուելով բարոյական հրաշքներ կարող է գործել: Եւ սակայն նաեւ կրնայ ծրագրին մէջ այնքան տեղ գրաւել որ Աստուծոյ գործունէութեան ճամբան կը խափանէ: Եւ ճիշդ նոյն տարօրինակ եւ տխուր բներեւոյթի մը կը հանդիպինք: Մենք մարդիկս հոգեւոր գործին մէջ երբեմն չափէն աւելի գերակատար կ'ըլլանք: Եթէ երբեք Աստուծոյ հետ պիտի գործակցինք, Աւագ Ընկերը նա ինքն պարտի ըլլալ: Անո՛ր գործն է: Անո՛ր է ծրագրերը: Անո՛ր է ղեկավարող կեամբը: Մենք կամենալու ենք կըրտսեր ընկեր մնալ: Եթէ յանգցնինք ա-

ւագ, մինչև իսկ հաւասար ըլլալ, հա-
կառակ ամէն անձնանուիրման և ե-
ռանդի մեր ջանքերը մեծ գործին ար-
գելք կը դառնան և մեր կարծեցեալ զօ-
րութիւնը իսկապէս տկարութիւն կ'ըլ-
լայ:

Մարդկային ոյժը կը սիրէ մկանուն-
քի, դրամի և ուղեղի ձեւերով զգես-
տաւորիլ: Ով որ ասոնց պոնէ երկուքը
ունի՝ հրապարակի վրայ մատով կը ցու-
ցուի: Երեքը միացեալ ունեցողը գեր-
մարդ կը հռչակուի: Կա՞յ նպատակ մը,
ծրագիր մը, ձեռնարկ մը զոր առողջ
մարմինով և առատ դրամով եւ սուր
մտքով օժտուած անձ մը չի կրնար յա-
ջողցնել: Զկա՞յ, կը կարծուի: Եւ ող-
բալիօրէն կը սխալինք: Ուրիշ շրջա-
նակներու մէջ եղելութիւնը ինչ ալ ըլ-
լայ, հոգեւորին մէջ բոլոր գործութիւնը
չէ որ յաղթանակը կը վճռէ: Կորովի
անձ մը Աստուծոյ գործին համար փա-
փաքելի գործիք մը կրնայ չըլլալ: Մար-
դը իր բնական ձիրքերուն տարապայ-
ման գիտակցութեամբը յաւէտ իր անձին
քան թէ Աստուծոյ կրնայ կոթընիլ:
Գործին պահանջածէն աւելի չողի
ոյժ կրնայ արտադրել իր անձնաւորու-
թիւնը: Որպէսզի Աստուած կարենայ
գործել, ոյժերու համեմատական քանա-
կը պարտի յեղաշրջուիլ: Երբ մարդը
չափազանց զօրաւոր է, չափով մը ու-
ժաթափ ըլլալու է:

Ասանկ եղաւ Գեղէօնի դէպքին մէջ:
Երբ զօրավարը ճակատամարտին յատա-
կագիծը յօրինեց, ինքզինք անոր մէջ
այնքան շատ գրաւ որ Աւագ Ընկերին
քիչ տեղ մնաց: Եւ Տէրը ըսաւ. «Գե-
ղի հետ եղող ժողովուրդը շատ է, չեմ
ուզիր Մարտինը անոնց ձեռքը տալ:
չըլլայ որ Խորայէլ ինծի դէմ պարծենայ
եւ ըսէ՝ իմ ձեռք» զիս ազատեց:» Կը
թուի թէ Պօղոս ուժալից անձնաւորու-
թիւն մը ըլլալով միևնոյն փորձանքին
ենթակայ էր: Իմացական կորով, ան-

յողողող կամք, դաստիարակուած
միտք, ազգասիրութիւն, կրօնական
նախանձաւորութիւն, անձանձիր աշ-
խատութիւն, այլովքն հանդերձ, զայն
մեծ գործիչ մը ըլլալու ճակատագրած
էին: Թաքուն և մեծ վտանգ մը անոր
աչքէն վրիպած էր: Նոյն իսկ իր ոյժե-
րուն սա գերառատութիւնը զայն յանձ-
նապաստանութեան կը մղէր անգիտակ-
ցաբար: Մարմինը և արիւնը կը ցան-
կային որ Պօղոս ըլլայ գործիչը, մինչ
Քրիստոս կը կամենար որ նա գործիք
ըլլալով բաւականանայ:

Զափէն աւելի մարդ և ոչ բաւակա-
նաչափ Աստուած: Մեր օրով որքա՞ն
ընդհանուր է աս փորձութիւնը: Ամէն
եկեղեցի կը փնտռէ հարուստ անդամներ,
նշանաւոր առաջնորդներ, երիտասարդ
օգնականներ, պերճախօս քարոզիչներ՝
մարդէ և նիւթէ տկեղալիւով ինչ որ ի
վերուստ միայն կրնայ տրուիլ: Ո՞ր-
քան զիւրին է չսեսնել թէ այդ փա-
փաքուած ոյժի ազդեցութիւնը տէրունա-
կան գործունէութիւնը սահմանաւորի-
լու հնարաւորութիւն ալ ունին: Եւ
Աստուած՝ որ զործն ալ գործիքն ալ
մեղմէ աւելի կը սիրէ, զործը փրկելու
սիրոյն համար գործիքը տկարացնելու
միջոցներ ձեռք կ'առնէ: Գեղէօնի երե-
սուն երկու հազար զօրքը նուազեցուե-
լու է մինչև երեք հարիւր հոգի մնան:
Պօղոսի կը տրուի մարմինի մէջ խայ-
թոց մը, զինք սաէպ չարչարող և ալլոց
առջև խոնարհեցնող հիւանդութիւն մը.
և երբ նա բուժման համար կ'աղօթէ,
պատասխան կուգայ՝ «Իմ շնորհքս հե-
րիք է քեզի, քանզի իմ զօրութիւնս
տկարութեան մէջ կը յայտնուի:» Եւ
ցվերջ այդպէս մնաց, որով տկարացեալ
Պօղոսի մէջ զօրացեալ Քրիստոս փառա-
ւորուեցաւ:

Ահա մեր բազում խուսախարու-
թեանց բանալին: Մենք սովոր ենք
խորհիլ թէ՛ որպէսզի Աստուած մեր

ձեռքով յաջողապէս գործէ, անհրաժեշտ է որ անվթար առողջութիւն վայելէնք, կամ գրամալից զրպան մը կրենք, կամ մեղրածորան լեզուով մը քարոզենք, կամ հասարակութեան պաշտիլի կուռք մը ըլլանք:

Մարդկային տրամաբանութիւն է այս: Իսկ Աստուած յաճախ տարբեր կը խորհի: Նա իր ընտրեալ ծառայէն կ'ա՛մ կը զլանայ այդ շնորհները, կ'ա՛մ իթէ իրնէ տուած է՝ կը բարեհաճի երբեմն զայն անոնցմէ զրկել, անոր ոյժերը ջըլատել, անոր ջանքերը ընդհատել: Եւ աշխարհը կը տեսնէ թէ ոչ միայն զործիքին տկարութիւնը զործիչին զործունէութեան արդիւք չըլլար, հապա՛նոյն իսկ անոր յաւելեալ զօրութեան միջոց կ'ըլլայ: Փորձառու հաւատացեալներ ասոր կը վկայեն:

Աս փառաւոր ճշմարտութիւնը, սակայն, չարաչար մեկնելէ զուշտանք: Մարդու բնատուր ոյժերը չենք արհամարհեր, եւ նիւթական կամ բարոյական անճարակութեան մրցանակ չենք մատուցաներ՝ երբ կ'ըսենք թէ Քրիստոս երբեմն մեր տկարութիւնները աւելի գործածելի կը գտնէ քան մեր ոյժե-

րը: Միակուղիդ եզրակացութիւնը սա է որ պարտինք մեր «ես»երը Անոր «ես»ին ենթարկել եւ մեր ոյժերը անվերապահօրէն Անոր սիրոյ ծառայութեան նուիրել: Այն ատեն մեր թէ՛ տկարութիւնը եւ թէ՛ զօրութիւնը Անոր գործիք կ'ըլլան:

«Յորժամ տկարանամ, յայնժամ զօրանամ»: Նախադասութեան մէջ երկու բայերը միեւնոյն տէր բային տունն, այսինքն՝ ես: Երկու «ես»երը, սակայն, բոլորովին նոյնիմաստ չեն: Առաջին դէպքին մէջ խօսողը Պօղոս ինքն է. երկրորդին մէջ յաւելուածական խօսող մըն ալ կայ: Սապէս ըսել կ'ուզէ. Յորժամ կը տկարանամ ես (Պօղոս), յայնժամ կը զօրանամ ես (առաւել Քրիստոս):»

Մարթին Լուտեր կ'ըսէր թէ երբ որ Սատանան կուգայ եւ սիրտին զուռը բազմեցնով կը կանչէ «Մա՛րթին, Մա՛րթին,» ինքը ներսէն կը պատասխանէր, «Մարթին հոս չէ, ան մեռաւ. հիմայ անոր տեղ հոս Քրիստոս կը բնակի:»

Աս տեսակ հոգևոր փորձառութեան մէջ կը պառկի յաղթական կեանքին զաղտնիքը:

ԶՈՐՍ ՏԻՊԷ ՀՍԿԱՅ ՔԱՐՈՁԻԶՆԵՐ

4. ՏՐ. ՀԵՐՐԻ ՐԻՄՄԻՏ

Գրեց՝ ՎԵՐ. Կ. ԱՏԱՆԱԼԵԱՆ

Գիտնական քարոզիչ մըն է Լոս Անկէլէսէն, 40—45 տարեկան: Բժիշկ ըլլալու կը պատրաստուէր, զերջին տարին Սուրբ Հոգին իրեն դպած է, ու եղած է հոգիներու բժիշկը: Իր անունը ծանուցած տատենը կ'ըսէին. «Բանի տարիներէ ի վեր զինքը հոս հրաւիրած էինք, հազիւ այս տարի յաջողեցանք որ հոս գալով երկու շաբաթ քարոզէ»:

Այս մարդուն բոլոր դասախօսութիւնները «ԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՍՐ. ԳԻՐՔԻ» վերայ են: Գիտուն մե, նաեւ գիտուն է Սր. Գրքի: Սր. Գրքի գէ՛մ ուրէ առարկութիւն եւ քննական բոլոր կնճառոտ կէտերն են իր նիւթերը: Սր. Գրոց թշնամիներուն դէմ կը կռուի, կը մարտնչի, ոչ թէ պոռալով, այլ փաստաբանելով, զրտականօրէն վերլուծելով նիւթը, եւ

տրամաբանօրէն դէպքերով ու ապացոյցներով հակառակախօսին մտքին մէջ եղած կասկածելի կէտերը կը ջրէ և զայն կը լռեցնէ, ապշահար կը ձգէ, «Այս չիտակ է» ըսել կուտայ անոնց:

Դասախօսութեան նիւթերէն ումանք էին. «Ինչպէ՞ս պատմութիւնը կը վաւերացնէ Մարգարէները», «Արդի գիտութիւնը և Նոյի տապանը», «Արդի գիտութիւնն ու ջրհեղեղը», «Արդի գիտութիւնն ու երիտասարդները», «Յիսուսի կոյսէ մը ծննդեան գիտնականի մը տեսութիւնը», «Արդի գիտութիւնը և Յովնանի ձուկէ կլլուելը» . . . :

Ասիկա աղմկարար մը կամ խուժանավար մը չէ, միւս երեքէն բոլորովին տարբեր տեսակ մէկն է: Հետաքրքիր ու քննական գիտուններ կ'ունենան այս գիտնականին: Մարդը յատկապէս կը ծանուցանէ թէ վաղուան համար թող բոլոր բժիշկները գան կուսական ծննդեան մասին, Յովնանի մասին լսելու: Մարդը ջախջախիչ փաստեր ու տրամաբանութիւն ունի, կը պապանծեցնէ: Լոկ Յովնանի ուսումնասիրութեան համար տարիներ աշխատած է, ոչ միայն գիրքերով, այլ կէտ ձուկ որսացողներու քով ապրելով, անոնց հետ գործելով, որսուած ձուկին բերնէն անձամբ փորը լիջնելով, քննելով ամէն ինչ. . . : Գիտէ ըսածները, տէրն է իր թեզին, հեղինակաւոր է: Անոր մտիկ ընելով կնճիռներդ բոլորովին կը լուծուին: Մարդ Աստուծոյ փառք կուտայ այսպիսի հաւատացեալ գիտուն երիտասարդ հոգեւորականներ ստեղծելուն համար:

Խօսելու ձևը շատ գրաւիչ է, առողջանութիւնը յստակ է, զօրաւոր ձայն ունի, երբեմն առիւծ կը կտրի: Այս ալ բնաւ թուղթի չի նայիր, գիտուններուն անունները, թուական հաշիւները, թուականները, քիմիական ու կենսաբանական ֆորմլները, երկրաբանական ամէն ինչ յականէ յանդամէ կը

յիշէ: Շատ անգամ կը խնդացնէ ունկնդիրները, որ ափի բերան մտիկ կ'ընեն: Այս ալ Աստուծոյ հրաշալիքն է, յիրաւի հսկայ մըն է, եզական քարոզիչ մըն է:

Դասախօսութիւնը լմնացածին պէս չոգեչարժ կառախուսքը առաւ, ճամբուն մէկ մասն ալ թռչելով—սաւառնակով—ճամբորդեց. քանզի հետեւեալ օրը պիտի հասնէր իր տեղը: Ահա քսաններորդ դարու առաքելութիւնը ու ճամբորդութիւնը, որչա՛փ տարբեր Յիսուսի ատենը եղածէն:

Ինծի ծանօթներէն չորս տարբեր տեսակները նմոյշներ են, դեռ ինչե՛ր կան, Աստուած ինչե՛ր ստեղծած է:

Հոս քարոզիչներ ալ մասնագիտութիւններ կը մշակեն: Ինչպէս որ տոբ-թորները աչքի, ականջի, մորթի, եայլունի, այսինքն մէկ կէտին վրայ մասնաւոր հեղինակութիւն կը շահին ընդհանուր բժշկութիւնը սորվելէ վերջ, նոյնը կ'ընեն քարոզիչները: Քարոզիչները իրարու մասնագիտութիւնները, հեղինակութիւնը կը յարգեն, ինչպէս նաեւ ժողովուրդը: Այնպէս որ զանազան մասնագէտներ քով քովի գալով կատարեալ, լրացեալ խումբ մը կը կազմեն: Անշուշտ general practitionerներ ալ շատ կան: Ամերիկայի ժողովուրդը գիտէ արժէքաւորը և գիտէ նաեւ գնահատել քաջալերել ու օգտուել: Այս է գաղտնիքը մասնագիտութեան մշակման: Ամէնն ալ «ամէն բան գիտեմ» ըսողներ չեն: Ամերիկայի զարգացման բանալին հոս է:

Մենք, հայրենակիցներ, օգտուի՛նք ուրիշներէ, սակայն այլոց նմանելու չաշխատինք, ուսանինք, ուսումնասիրենք, և մարսենք ու ըլլանք ինքնատիպ: Սբ. Հոգին մեզի թող առաջնորդէ:

ԵԱՆՔԸՐՍ, ՆԻԽ.ԵՈՐՔ,

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԻՆ ՊԱՏԳԱՄԸ

Գրեց՝ ՓՐՈՖ. ԶԵՆՈՐ Ա. ՊԵՋՃԵԱՆ

Ամէն ազգ իւր ազգային տօնն ունի։ Մեր ազգային տօնն ալ Վարդանանցն է։

Ամերիկայ Յուլիս 4ը կը տօնէ, քանզի 1776ի Յուլիս 4ին էր որ Ամերիկայի 13 նահանգները իրենց անկախութիւնը հռչակեցին և վերջ ի վերջոյ յաջողեցան Անգղիոյ լուծը թօթափել։

Յուլիս 14 Ֆրանսայի ազգային տօնն է. քանզի 1789 Յուլիս 14ին էր որ բռնակալութեան եւ հին բէժիմի խորհրդականները եղող Պատիւի դուռերը խորտակուեցան, բանտարկեալները արձակուեցան, և Ֆրանսայի և աշխարհիս համար նոր դար մը՝ ազատութեան դարը սկսաւ։

Մեր ազգային տօնն ալ Վարդանանցն է։ Բայց որչափ տարբեր Յուլիս 4ի, Յուլիս 14ի տօներէն։ Այնչափ տարբեր որչափ մեր ճակատագիրը կը տարբերի, Միացեալ Նահանգաց և Ֆրանսայի ճակատագրէն։ Վերջերս քիչ մնաց մեր հին տօնը փոխէինք եւ անոր տեղը Սէվրի Դաշնագրի օրը ընդունէինք. բայց այդ ալ չեղաւ. երազ մըն էր եւ անհետացաւ։ Վերագարձանք նորէն հին տօնին — Վարդանանցին։

Վարդանանցը մեր ազգային պատմութեան, ազգային կեանքին ճիշդ խորհրդանշանն է։ Իրական մէկ պատկերն է մեր ազգային մարտիրոսութեան, զոհողութեան և հաւատքին։ Ան արտայայտումն է պարտութեան մէջ յաղթութեան, ձախողութեան մէջ յաջողութեան, գլխաւորութեան մէջ յուսոյ և հաւատքի։

Բայց այս օրը մեզի համար սուգի և լացի օր չէ։ Աւարայրի դաշտին վրայ Յազկերտի ստուարածիւր զինուորները յաղթութիւնը տարին, բայց անիկա կիւրոսական յաղթութիւն մըն էր։

Բուն յաղթանակը Վարդան և իւր մարտիրոսացեալ ընկերները տարին։ Աւարայր՝ մեր թերմոսիլէն է։ Բարոյական յաղթութիւնը Վարդանինն էր։ Սասանեանները վերջապէս Վահան Մամիկոնեանի օրով ստիպուեցան տալ ինչ որ Վարդանանք ծախու առած էին իրենց արեան գնով, կրօնական և քաղաքական ազատութիւն։

Սասանեանք կործանեցան, անհետացան, բայց Հայերը դեռ կ'ապրին, և պիտի ապրին երկայն, եթէ անձնապաշտ չըլլան։

Վարդանանց պատերազմը ինչ՞ու կը տօնենք։

Քանզի ատով մեր կրօնքը, մեր եկեղեցին պաշտպանեցինք, պահեցինք. եթէ ոչ կրակապաշտ պիտի դառնալինք, անոնց մէջ պիտի ձուլուէինք, և անոնց հետ պիտի անհետանայինք։

Քանզի ատով ապահովեցինք մեր ուրոյն ազգային գոյութիւնը։ Սասանեանք վերջապէս ստիպուեցան ճանշնալ մեր ազգային ինքնավարութիւնը։

Այս պատերազմով ազգային ինքնագիտակցութեան ոգին սկսաւ արծարծուիլ և զօրանալ մեր մէջ։

Հայերը այսպէս պատրաստուեցան մաքառելու աւելի սոսկալի ապագայ թըշնամիներուն դէմ, մանաւանդ Մահմետականութեան դէմ։

Դժբաղդաբար այսօր կը գտնուին Հայեր որ կը կարծեն թէ աւելի օգտակար պիտի ըլլար այն ատեն մոգապաշտութիւնը ընդունիլ և այսպէս Պարսից հետ հասկնողութեան մը գալ։ Ոչ, ասիկայ աղիտալի պիտի ըլլար, թէ՛ քաղաքական թէ՛ կրօնական տեսակէտով։ Յայնժամ պիտի ձուլուէինք հզօր Պարսիկ ժողովուրդին հետ։ Հայ գիրերը դեռ նոր

դտնուած ըլլալով, հայ գրականութիւնը և մշակոյթը սաղմին մէջ պիտի խեղդուէին, հայագիտութիւնը պիտի անհետանար, ինչպէս անհետացան տասնեակ Արեւելեան ազգեր և պետութիւններ:

Վարդանանց տօնին այսօր մեզի պատգամը ի՞նչ է: Այս օր ալ շրջապատուած ենք թշնամիներով, ոչ նուազ անպուժ ոչ նուազ անագործին, քան Յազկերտի մոգերը և բանակները: Մեր ազգային կեանքն իսկ սպառնալիքի տակ է:

Քաղաքական տեսակէտով՝ ցրուած, լքուած, թափառական ազգ մը ենք: Գլուխ չունինք: Յենակէտ չունինք: Բուսահայութեան արդի վիճակը այժմ շատ մեծ յոյս մը չի ներշնչեր ապագայի համար:

Ապագայնացման վտանգը որեւէ ժամանակէ աւելի է: Մէկ երկու սերունդ վերջը ամենակուլ Ամերիկայի մէջ ո՞րչափ ազգային լիզու, գրականութիւն և զգացում պիտի մնայ. նոյնպէս Ֆրանսայի և Յունաստանի, Անգղիոյ և ուրիշ Եւրոպական երկիրներու մէջ:

Տնտեսականապէս ալ մեր վիճակը ամենեւին նախանձելի չէ: Թաւանուած քարգուած, աղքատ ժողովուրդ մըն ենք: Հազիւ հազ մեր օրապահիկ հացը կը զբոսենք: Կը ճգնինք չոր հացի համար:

Անմիաբանութիւն, հակամարտ հոսանքներ, եղբայրասպան պայքարներ, մեր ազգային ամենամեծ աղէտն են:

Գինեմոլութիւն, խաղամոլութիւն, անխիղճ շահամոլութիւն, կոռւասիրութիւն, տգիտութիւն, կոշտութիւն մեզ կը հալածեն:

Վերջապէս անբարոյականութիւն, անկրօնութիւն կամ կրօնական անտարբերութիւն, ընտանեկան կեանքի անկում մեր ազգային կեանքին ծովը կը քամեն, մեր էութեան կ'սպառնան:

Ասոնց գիմադրելու, ասոնք չէզոքացնելու, ասոնք դարմանելու, ասոնց

վրայ յաղթանակ տանելու համար՝ պէտք ունինք Վարդան ու Վահան Մամիկոնեանի և իր ընկերներուն ոգւոյն, միաբանութեան, քաջութեան, զոհողութեան, հաւատքի ոգւոյն: Պէտք է զինուինք, ոչ թէ սուրով, հրացանով, թընդանօթով, ասոնք ժամանակ մը լաւ էին, բայց այս օր ունէ նշանակութիւն չունին: Ափ մը ցրուած, աղքատ, անտէր և անմիաբան թափառականներ ինչ կրնանք ընել Բուսիոյ և Թուրքիոյ պէս պետութեանց դէմ: Ո՞վ գիտէ, կրնայ ժամանակ մը զալ ու ասոնց պէտք ունենանք: Բայց հիմա հորիզոնին վրայ ասանկ հաւանականութեան նշոյլն անգամ չ'երևնար: Այսօր պէնքով զինուորով ընելիք բան մը չունինք: Մեր պատերազմը զինուորական, քաղաքական չէ, տնտեսական, կրթական, ընկերային, բարոյական է: Պէտք է պատերազմինք տգիտութեան, անբարոյականութեան, անմիաբանութեան, ապագայնացումի, մանաւանդ անկրօնութեան դէմ: Այս պատերազմը յաջողապէս մը զելու համար՝ պէտք է ունենանք Վարդանի, Սահակի և Ղևոնդ Երէցի արիութիւնը, հաստատամտութիւնը, կրօնասիրութիւնը, անշահախնդիր, անձնուէր ոգին: Պատրաստենք մեր նոր սերունդը կեանքի պայքարին, տընտեսական, գիտական, ազգային և կրօնաբարոյական գիտնի վրայ:

Այս է ըստ իս Վարդանանց տօնին պատգամը՝ այս օր մեզի համար:

ԿԱԹ

(Շար. և Վերջ)

Գրեց՝ ՏՈՒԹ. Ֆ. ՅՈՎՆԱՆԵԱՆ

Չեռացած կաթի միջոցաւ շատ մը հիւանդութիւններ մարդերու կը փոխանցուին: Ընդհանրապէս կովու կաթ

կը գործածենք: Կաթի միջոցաւ նախ՝ կովերու ունեցած ախտերուն մանրէնէն ըլլան փոխանցուիլ: ասոնցմէ կարեւորներն են հիւծախտի, բերնի և ոտքի հիւանդութեանց, ծիծի վէրքերուն մանրէները: Այծերու և անոնց կաթին մէջ հիւծախտի մանրէն չի գտնուիր: Բայց ասոնց մէջ ալ Մալթայի տենդի մանրէին գոյութիւնը հաւանական է: Երկրորդ՝ ուրիշ ախտերու մանրէները, — զոր օրինակ, աղետապի, արիւնոտ փորհարութեան, կեղծմաշկի, կայծակի, հնտախտի (գոլբեր), ամառնային կանաչ փորհարութեան մանրէները — կերպով մը չեփած կաթին մէջ կրնան գտնուիլ և այս կերպով վտանգաւոր հիւանդութիւններ կրնան ծագիլ: Հասկցուած է որ մանուկներու մէջ երեցած հիւծախտը շատ անգամ հիւծախտաւոր կովերու կաթին միջոցաւ փոխանցուած է: Ամառը մեռնող մանուկներու հարիւրն յիսունին պատճառը կանաչ փորհարութիւնն է:

Բազմապիւրթ երկիրներու մէջ կաթընտու կովերը յաճախակի քննութեան կ'ենթարկուին և ախտաւորները անմիջապէս կը մեղցուին: Ծաւալի է որ այս երկրին մէջ տակաւին այսպիսի ձեռնարկ չկայ: Ասիկայ ծանօթ ըլլալով վտանգելի և շիտակ կերպ մը չէ կաթը չեռացած խմել:

Ուրեմն կաթը եռացնենք: Այս կերպըն ալ առարկելի է: Կաթը եռացնելով անոր քիմիական բաղադրութեան և պարունակութեան մէջ շատ մը զգալի և հակառողջապահական փոփոխութիւններ տեղի կ'ունենան, քանզի կեանքի և մարսողութեան համար պէտք եղած 5—6 տեսակ մակարոններ իրենց իսկական ազդեցութիւնը կը կորսնցնեն և կաթին մէջ գտնուող այդ հրաշալի և խորհրդաւոր ոյժին, կենսամիջին, մեծ մասը կ'աւրուի, և անոր մէջ գըտնուող տասէ աւելի գործարանաւոր և

հանքային աղերու նուրբ բաղադրութիւնը կը փոխուի, և մանաւանդ լուծածնային մետաղներ ամանին տակը դիւրաւ մը կը կազմեն: Երկրորդ ատեն՝ միայն եռացած կաթով սնուցուած մանուկներու և մարդերուն մէջ երեւան կուգան արիւնի, ցակրի, եւ ընդհանուր կազմուածքի մասնաւոր հիւանդութիւններ: Ահա այսպիսի վտանգ մը կանխարգելու եւ պակասած տարրը լրացնելու համար այսպիսի մանուկներու կուտանք նարինջի, լուրկի եւ ուրիշ բանջարեղէններու ջուրերը:

Ուրեմն ի՞նչ պէտք է ընենք: Եթէ կաթը եռացնենք կարգ մը հիւանդութիւններու կ'ենթարկուինք. եթէ զայն չեռացած գործածենք աւելի մեծ եւ աւելի վտանգաւոր հիւանդութիւններ մեզի կ'սպառնան: Այս պատճառաւ նըշանաւոր փրոֆէսոր Փասթոր միջին կերպ մը կը յանձնարարէ, որուն համեմատ կաթը կէս ժամու չափ սննթիկը 70—80 աստիճան պէտք է տաքցուի: Այս կերպն ալ անառարկելի չէ, բայց իբրեկու չարեաց փոքրագոյնը այս կերպը կը յանձնարարենք: Պէտք է ջանանք կարելի եղածին չափ մաքուր եւ անխառն կաթ առնելու: Ապա զայն 70—80 աստիճան կէս ժամ տաքցնելով հիւծախտի, տիգանթերի, զանազան տենդերու, ամառնային փորհարութեան մանրէները բոլորովին բնաջնջած կ'ըլլանք: Պէտք է սա ալ ըսուի թէ 80 աստիճան տաքութիւնը չի բաւեր կարգ մը մանրէներու ձուերը (spore) սպաննելու, և թէ կաթը մէկ անգամ եռացնելով ալ անոնք չեն մեռնիր: 70—80 աստիճան տաքցած կաթին մակարդին, կենսամիջին և մետաղային բաղադրութեանց մէջ քիմիական փոփոխութիւններ յառաջ չեն գար, կաթի այդ նուրբ և բարդ կազմը նոյնութեամբ կը մնայ:

Այս կերպը կրնանք մեր տուններուն մէջ, սապէս գործնականացնել: Նախ՝

կաթը երբեք պէտք չէ սաստկորէն վառող վառարանի կամ ածուխի կրակին վրայ եփել, այլ պէտք է թեթեւ ածուխի կրակին վրայ, բաց ամանի մը մէջ, կամաց կամաց կէս ժամ մինչև 80 աստիճան տաքցնել: Երկրորդն է «Պան մարին» կերպը. այսինքն, կաթը ամանի մը մէջ կը դնենք, ապա աւելի մեծ ուլիչ աման մը, սան մը, մինչև կէսը ջուրով լեցնելով օճախի վրայ կը դնենք և ջուրը կ'հռացնենք: Երբ ջուրը հոսաւ կ'սկսի կաթի ամանը ջուրի մէջ կը դնենք, մէկ երկու վայրկեան օճախի վրայ պահելէ ետքը երկու ամաններն ալ կրակի վրայէն վար կ'առնենք, և կաթը 30 վայրկեանի չափ տաք ջուրի մէջ կը պահենք. և այս կերպով պէտք եղած 70—80 աստիճան տաքութիւնը յառաջ կը բերուի: 30 վայրկեան անցնելէ ետքը կաթը կարելի է դածին չափ պաղ տեղ մը կը պահենք: Այսպէս եփած կաթը, ամէն բան նկատի առնելով, ամէնէն աւելի գործածութեան յարմարը կը դառնուի:

* *

Մի քանի բառ ալ մածունի մասին: Կաթը անմիապահելու ուրիշ մէկ կերպըն ալ զայն մածունի վերածելն է: Մածունը կաթին կրասեր եղբայրն է: Յաճախ զայն իբր կերակուր և երբեմն ալ իբր դեղ կը գործածենք: Փրօֆ. Մէչնիդոֆ, աշխարհածանօթ Պուլկար բժիշկը, կը պնդէր թէ «Մարդիկ կրնան 100-120 տարի ապրիլ եթէ իրենց կեակուրներուն մէջ ամէն օր մածուն գտնուի»: Ասոր մէջ ճշմարտութիւնը սա է. մածունի մակարդին և թթուին մէջ ուրիշ փնտասկար մանրէները չեն կրնար ապրիլ և կը մեռնին: Թարմ եւ մաքուր մածուն ուտող մարդերու ստամոքսներուն եւ աղիքներուն մէջ ուրիշ մանրէները բաղդատմամբ քիչ կը գտնուին: Ամառնային փորհարութիւն ունեցող մանուկ մը, որուն ապովառը

կանաչ կ'ըլլայ, պէտք է անմիջապէս առժամաբար դադրի կաթ ուտելէ և սկսի միայն թարմ եւ անուշ մածուն ուտել: Մանուկներու համար թարմ և մաքուր մածունը թէ՛ լաւ սնունդ մը և թէ՛ ազդու դեղ մըն է: Ամառնային փորհարութեան մանրէները մածունի մէջ կը բնաջնջուին: Ուրախութեամբ կը յայտնենք թէ այս կերպով շատ մը բուժումը անյուսակի նկատուած մանուկները բժշկած ենք: Բայց մեր յանձնարարած մածունը՝ այս քաղաքին մէջ ծախուող թթու և խարդախուած մածունը հասկըցնել չենք ուզեր: Այս երկրին մէջ ամէն մայր պէտք է թէ՛ մածուն մակարդել դիտնայ և թէ՛ զայն գործածէ: Թարմ և մաքուր մածունէ շինուած պաղ թանը՝ ուրիշ բոլոր օջարակներէն եւ խմելիքներէն աւելի զովացուցիչ եւ առողջապահական է:

Պէտք է սա ալ ըսուի թէ կաթի, մածունի, և այլնի նման կերակուրները, որոնք նոսր բաղադրութիւն ունին, տարբեր մարդերու վրայ տարբեր ազդեցութիւն կ'ունենան: Երբ կարգ մը մարդիկ կաթ խմեն, իսկ ուրիշներ մածուն ուտեն, անոնք իրենց ստամոքսին և աղիքներուն մէջ կը խմորին, կը թթուին, և հետեւաբար անհանգստութիւն կ'ըլլան: Ասիկա փորձով կը յայտնուի և կը զանազանուի: Բայց ասիկա բացառիկ պարագաներու բաժնին կը պատկանի:

ԻՆՏԻ ՀԱՄԱՐ

Կը պատմուի թէ հրդեհ ծագած էր տան մը մէջ ուր կը քնանար պղտիկ մանուկ մը: Ասոր մայրը իր հոգեհատորը սպառնացող մահէն ազատելու համար իր կեանքը վտանգի ենթարկելով բոցերու մէջէն կ'անցնի, ներս կը խուժէ և իր զաւակը սրտին վրայ սրի-

մած դուրս կուգայ: Մանուկին ոչ մէկ փնտա եղած էր, սակայն մայրը իր այս խիզախ խոյանքին մէջ ստացաւ իր երեսին վրայ այրուած քներ որոնք զինք անդամանելի կերպով տգեղացին: Մի քանի տասնեակ տարիներ վերջ երբոր մանուկը մեծցած ու երիտասարդ մը եղած էր, այս կնկան տգեղութեան մասին մէկու մը կողմէն եղած ակնարկութեան ի պատասխան երիտասարդը զայրացած շիշտով մը ըսաւ. «Այս կինը աշխարհի բոլոր կիներէն աւելի գեղեցիկ կ'երեւայ ինծի, ո՛չ միայն անոր համար որ ան իմ մայրս է, այլ առաւելապէս անոր համար որ իր երեսի ուրիշները՝ որոնք զինք այդպէս տգեղացուցած են՝ ստացաւ ինծի համար երբոր ան կամովին իր կեանքը վտանգելով զիս ստոյգ մահէն ազատելու փորձը ըրաւ:»

Այս պատմութիւնը գէթ չափով մը կը բացատրէ Քրիստոսի՝ մարդոց հանդէպ սէրը և բոլոր մարդոց Քրիստոսի հանդէպ դիրքը և պարտականութիւնը: «Վասն զի Աստուած այնպէս սիրեց աշխարհը մինչև իր միածին Որդին տուաւ, որպէսզի ամէն ով որ Անոր հաւատայ չը կորուսի, հապա յաւիտենական կեանք ունենայ:» Յովհ. 3. 16:

Բոլոր մարդիկ անխտիր Աստուծոյ կը վայելեն միշտ անհամար և անչափ օրհնութիւններ և բարեքներ: Բայց Աստուծոյ սիրոյն տարողութիւնը բացատրող ամենախորունկ արտայայտութիւնը կը գտնուի այս համարին մէջ: Աստուած այնպէս սիրեց աշխարհը մինչև իր միածին Որդին տուաւ... և Որդին յօժարեցաւ ինքզինքը ունայնացնել և երկինքի մէջ ունեցած իր փառքը թողնելով աշխարհս եկաւ ոչ թէ իշխելու և փառաբանուելու համար, այլ չարչարուելու, անարգուելու և խաչի մահուամբ մեռնելու համար իր սիրոյն առարկան եղող մարդոց իսկ ձեռքով: ու այս ամէնը ինծի համար, քեզի համար

բոլոր մարդոց համար: Ո՛հ, անհասկնալի սէր՝ որուն առջև կը հալին մարդոց ամենակարծր սրտերը, բաւ է որ անոնք հաւատան այս իրողութեան: Մինչդեռ առոր չհաւատացողը, ինչ որ ալ ըլլայ իր դիրքը մարդկութեան մէջ, խաւարի մէջ է, ու չի կրնար սիրել ո՛չ իր Աստուածը ո՛չ ալ իր նմանները քրիստոնէական անկեղծ սիրով:

Երբոր ինծի ըսուի թէ թագաւորը ամենապատուական դիրքի մը վրայ հռչակապ ու խիստ չքեղ պալատ մը չի նշտուած է երբեք կամ զրեթէ չիմ հետաքրքրուիր, բայց երբոր գիտնամ թէ այդ պալատը ինծի նուէր մը ըլլալու համար չի նշտուած է՝ կարելի՞ է չհրճուիլ և կարելի՞ է որ այն թագաւորը սրտանց չտրեմ և անոր չհնազանդիմ: Նոյնպէս ալ զիս չի հետաքրքրիր թէ ասկէ 1930 տարի առաջ Յիսուս անունով մէկը ծնած է, թէ ան բարի և օրինակելի մարդ մը եղած է և թէ ան մեռած է իրր նահապետի միշտ ճշմարտութեան կառչած մինչև իր վերջին շունչը: Բայց խնդիրը տրամազիծօրէն կը տարբերի ու քարեղէն սիրտս կը հալի՝ երբոր գիտնամ և հաւատամ թէ Յիսուս Քրիստոս, միածին Որդին Աստուծոյ, իր երկնային գահը և փառքը թողուց ինծի հաւատ, մարմին առաւ և ապրեցաւ այս աշխարհի մէջ ինծի հաւատ, որպէսզի ուղիղ ճամբան սորվիմ, չարչարուեցաւ, խաչուեցաւ, իր պատուական արիւնը թափեց և մեռաւ ո՛հ, ինծի հաւատ, որպէսզի մեղքերէս փրկուիմ և ապրիմ յաւիտեան: Այս հաւատքով ու գիտակցութեամբ Անոր նուիրուելով է որ մէկը կրնայ ճշմարիտ քրիստոնեայ ըլլալ, ուղիղ և մաքուր կեանք ապրիլ, ու մեղքը և կեղծիքը ատելով հանդերձ բոլոր մարդիկը սիրել անկեղծ և անխաղախ սիրով, և ըսել մեծ առաքեալին հետ «Քրիստոսի սէրը զիս կ'ստիպէ»: Մինչդեռ այս գիտակցութենէս

զուրկ մէկը չի կրնար թափանցել Աստուծոյ սիրոյն խորունկութեան և բարձրութեան ու սիրել մարդիկը անշահախնդիր սիրով, այնպիսի մէկը ո՛չ միայն կը թերանայ Աստուծոյ հանդէպ իր պարտականութեանը մէջ, այլ նաեւ իր պատկանած ընտանիքին, համայնքին, ազգին և մարդկութեան զէմ գիտակցաբար կամ անգիտակցաբար կը մեղանչէ, մարդոց միջև խաղաղութեան և ներդաշնակութեան համար անհրաժեշտ եզոզ կէտին շուրջ իր բաժինը կատարելու մէջ թիրացած ըլլալուն համար: Եւ ճիշտ հոս պէտք է փնտռել ներկայիս տիրող մարդկային տառապանքին և անհանգստութեան ինչպէս նաեւ ընտանիքներու, եկեղեցիներու ու ազգերու մէջ տիրող անբաղձաչի վրձակին գաղտնիքը ու անոր դարմանը:

Վերջապէս այն գիտակցութիւնը՝ թէ Յիսուս Քրիստոս մեռաւ ինծի համար ու բոլոր մարդոց համար՝ կրնանք նկատել իբր անկիւնաքարը քրիստոնէական հաւատքի և անձնուէր սիրոյ շէնքին և իբր բաժնող գիծը բարոյականութեան և հոգեւոր կեանքի միջև: Ասոր համոզուելու համար իբր փաստ բաւական է մտքի առջեւ բերել այլ և այլ քարոզիչներու և եկեղեցականներու գործունէութիւնները ու զանոնք իրարու հետ բաղդատել արդիւնքի տեսակէտէն նայելով:

Մարդիկը Քրիստոսի առաջնորդելու տեսակէտէն վերջին դարու ամենայն շուրջ քարոզիչներէն Մր. Տ. Լ. Մուտի ըսած է. «Երանի թէ ամէն ոք զգայ և ըսէ. Քրիստոս մեռաւ իմ մեղքերու համար: Ծատ անգամ խորհած եմ որ եթէ միայն կարող ըլլայի այս իրապէս զգացնել մարդոց, պատշաճ կերպով պատմել Անոր մահուան պատմութիւնը, միայն մէկ քարոզ պիտի տայի. աշխարհի մէջ վեր վար շրջելով՝ միայն զա՛յն պիտի պատմէի . . . : Ձեմ կարծեր թէ

ծնած է այն մարդը որ կարող է զայն պատմել աւթանապէս:» Անգամ մը անոր հարցուեցաւ. «Մր. Մուտի, ի՞նչ է քու հաւատոյ հանգանակը». ան ըսաւ. «Իմ հաւատոյ հանգանակս կը գտնուի նստյի 53րդ գլխուն մէջ — «Անիկա մեր մեղքերուն համար վիրաւորուեցաւ և մեր անօրէնութիւններուն համար ծեծուեցաւ, մեր խաղաղութեան պատիժը անոր վրայ եղաւ. . . »

Ուստի ո՞վ սիրելի ընթերցող, եթէ արդէն այս ճշմարտութիւնը հասկցած մէկն ես կասկած չունիմ որ երջանիկ ես, քանզի պտած ես ճշմարտ եւ յաւիտեանական կենաց ճամբան իսկ եթէ տակաւին զայն հասկցած չեմ՝ գիտցիր թէ ամէն մարդ փրկութեան պէտք ունի և թէ մեղքէն փրկութիւն միմիայն Յիսուս Քրիստոսի քաւչաբար արեան հաւատաւով կարելի է, և վստահ եղիր թէ Ան որ զիս մեղքերէս փրկեց, իր խոստման համաձայն յօժար է և կրնայ քեզ ալ ապտել և փրկել, քանզի Քրիստոսի արիւնը ամէն մեղք կրնայ մաքրել: Ու երբոր ասկէ իրականութիւն դառնայ քու կեանքիդ մէջ, վստահաբար պիտի ունենաս իսկոյն նոր կեանք և նոր տեսութիւն, մաքուր և յստակ, և հակառակ աշխարհի այլ և այլ տառապանքներուն պիտի չըջապատէ քեզ խաղաղութիւն մը զոր աշխարհ չի կրնար տալ, յայնժամ պիտի երգես և ըսես եւրախտագիտական զղացումով. —

Ի՛նչ, հիւանալի փրկիչ մը ունիմ,
Ձի մեռաւ խաչին վրայ վասն իմ
Թափելով իր անգին սուրբ արիւն
Որ փրկէ ինձ նման մեղաւորն:
Նա գամուեցաւ խաչին ինձ համար
Խաչին վրայ բարձրացաւ վասն իմ
մեռաւ

Նա գամուեցաւ խաչին ինձ համար

ՄԵՐ ՊԱՐՏՔԸ ԱՍՖՈՒՐԻՑԷԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻՆ

Գրեց՝ ՎԵՐ. Ս. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Քրիստոնէութեան՝ Սուրբոյ Նուիրած պարծենալի հաստատութիւններէն մէկն է Ասֆուրիյէի հիւանդանոցը, որ հաստատուած է մօքի հաւասարակըշուէթիւնը կորսնցնող մարդերը դարմանելու համար: Ընդհանուրին ծանօթ է թէ այսպիսի հիւանդները յիւանար (մէճնուն) կը կոչուին Արեւելքի մէջ, և թէ այս պատճառաւ ինչպէ՛ս կը վարուին անոնց հետ: Հետեւեալք Տր. Վաղսմայր, 70 տարեկան Զուրիցիքացի մը, եւ իր երիտասարդ կիներ ասոնց սրտաճմիրկ վիճակը իրենց աղօթքին նիւթ կ'ընեն: Եւ հաւատքով գործի կ'սկսին. երկու տարի քաղաքակիրթ երկիրները կը պատին, պէտքը պարզ պատմութիւններով բայց արցունքներով կը պարզեն ու նպաստ կը հաւաքեն: Ապա Սուրիա գալով գետին ծախսեկ'առնեն, որ Պէյրութէն գէպի Տամասկոս ճամբուն վրայ, վեց մղոն երկարութեամբ, Լիբանանի լեռներուն կից, Պէյրութէն 400 ոտք բարձրութեամբ և 144 արտավար տարածութեամբ ազարակ մըն է: Այս կերպով հիւանդանոցը 1900 Օգոս. 20 ին գործի կ'սկսի Հրեայ, Իսլամ, Տրուզի, Յոյն, Մարոնի և Բողոքական համայնքները ներկայացնող 10 այր և 5 կին հիւանդներով:

Տր. Վալտմայրը բժիշկ մը չէր. բայց իր ձեռքը անցած գումարները ծախսած է նոր շէնքերու կառուցման, զանազան ծառերու մշակութեան, նորիկ հիւանդներու դարմանումին: Եւ այս կերպով ինը տարի անժոռանալի ծառայութիւններ մատուցանել վերջ կը մեռնի: Տիկ. Վալտմայրը տակաւին ողջ է:

Ապա հաստատութեան իբր տնօրէն կը հրաւիրուի Տոքթ. Ռաքսըն Սմիրն, որ այսպիսի հիւանդութեանց մասնա-

գէտն է, և որուն գործունէութիւնը 21 տարիներէ իվեր օրհնութիւն մը եղած է: Այս միջոցին շէնքերու թիւը աւելցած է, կարգ մը շէնքերու վրայ երկրորդ և երրորդ յարկեր աւելցուած են, շատ մը պաշտօն ծառեր տնկուած են. և ներկայիս այս հաստատութիւնը 185 անկողին պարունակող հիւանդանոց մը եղած է 51 անդամներէ բաղկացեալ պաշտօնէութեամբ: 1929-30 թ. միջոցին հոս գտնուած են 323 հիւանդներ, որոնք 41 տարբեր պաշտօններէ, ասպարէզներէ հոս եկած են, և որոնց մէջ կը գտնուէին փորագրիչ, սեղանաւոր, բժիշկ, ուսուցիչ եւ մեքենագէտ եայլն: Ասոնք եկած էին Սուրիայէ, Պաղեստինէ, Իրագէ, Թուրքիայէ, Բուսիայէ, Գալիֆորնիայէ, Ֆրանսայէ և անոր զաղութներէն և կը ներկայացնէին 35 տարբեր կրօններն ու յարանուանութիւնները: Այս հիւանդները 20 տեսակ մօքի թերութիւն և հիւանդութիւն ունէին. իբր արդիւնքը Ֆրանկախաի, շերմախաի (մալարիա), գլխեմոլութեան նման 13 պատճառներու: Ասոնցմէ չորսը այրիացեալ, 51ը ամուսնացեալ և 109 ամուրի վիճակին մէջ ենթարկուած էին այս հիւանդութեանց: Այս բոլորէն 20ը մեռած են, և 118 հատը մասամբ կամ կատարելապէս բուժուած ըլլալով դուրս ելած են եւ անոնց տեղ նոր հիւանդներ ընդունուած են:

Այս հաստատութեան մի քանի այցելութիւններ ունեցայ, որոնց առաջինը 1908 ին էր: Հասկցածիս համեմատ երբեմն հոն գծուարագոյնի և ահագոյն հիւանդներ կղզեան, որոնցմէ մէկը՝ կին մը, երկու բարապաններով, երեք ռստիկան գլխուորներով, մի քանի ըսպասաւորներով հազիւ կարելի եղած էր

ՊԱՏԳԱՄՆԵՐ ՍԹԷՆԼԻ ԶՈՆՍԷ

ԻՆՉՊԼԵՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԱՐ ԽԱՉ ԿՐԵԼՈՒ ԵՆՔ

Թարգմ. Յ. Մ. ՀԱԼԷՊԼԵԱՆ

Քրիստոնէական հոգին՝ պէտք մը տեսնել և զայն գոհացնելն իւր վրայ տառնել է։ Հէլէն Քէլլըր կոյր, խուլ և համր աղջիկ մըն էր։ Երիտասարդուհի մը գտնուեցաւ որ այդ աղջկան օգնելը յանձն առաւ։ Տարիներ վերջը համալսարանի մը մէջ երիտասարդուհի մը, փակման հանգէսի առթիւ ճառ մը արտասանեց։ Այս երիտասարդուհին ուրիշ մէկը չէր այլ այդ պղտիկ աղջիկը որ համր եղած էր ժամանակ մը և որ տակաւին խուլ և կոյր էր։

Այս վերջին անգամ Հնդկաստանէ մեկնելէս առաջ, գրի մեքենասանութրեցի կնոջ մը որ հեռուն Թիպէթի ամալութեանց մէջ կ'ապրէ՝ իր կեանքը բորոտներուն նուիրած։ Երբեք տուած չեմ բան մը այսքան ուրախութեամբ որքան այդ մեքենան։ Ան՝ տարիներ առաջ բորոտներու մէջ աշխատելու գնաց և օր մը սարսափով գտաւ թէ ինք ալ բորոտութենէն վարակուած է։ Աստուծոյ աղօթեց։ — «Տէ՛ր իմ, իմ բոլոր կեանքս քեզի կը յանձնեմ, սակայն բորոտութեամբ բան մը չեմ կրնար»։ Եւ բժշկուեցաւ, և հոն մնաց իր բոլոր կեանքը այդ բորոտներու պայմաններուն բարեբոլմին նուիրելով։

Մարդ Աստուծոյ կամքը կատարելու յօժար ըլլալու է, այն ատեն Աստուծոյ այդ մարդը հոգալու գործը իր վրայ կ'առնէ, և ասոր համար ուրիշ մարդ Աստուծոյ համար գործելու է։

Հնդկաստանի մէջ Դերման ամուսին կար, բժիշկ մը և իր կինը, ասոնք մօտաւորապէս 2000 բորոտներու հոգացման այնպիսի նուիրում մը ցուցուցին, որ մէկը հարցուց թէ այս նուիրում

մի գաղտնիքը ի՞նչ կրնայ ըլլալ։ Եւ իրողութիւնը հասկցաւ։ Ծնողքը պղտիկ աղջիկ մը ունեցեր էին, որ իրենց գործին բերմամբ, բորոտութենէ վարակուեր և մեռեր էր։ Անոնք ա՛յ աւելի լեցուն կերպով այդ դժբաղդներու հոգացումին նուիրուեցան։ Անոնց մէջ՝ տանջուող Քրիստոսի կը ծառայէին։ Քրիստոնեան ստիպեալ է ծառայել իր Տիրոջ յանձին տանջուողներու։

Բժիշկ մը Լոնտոնի փողոցներու մէջէն կ'անցնէր, իրեն պղտիկ մը մօտեցաւ, և հարցուց թէ արդիօք կ'ուզէ՞ր տեսնել շատ մը պղտիկներու քնացած տեղը։ Մարդը շուարած՝ «Այո» ըսաւ։ Այդ տղան զայն փողոցներու և նիւթաղերու մէջէն անցուց ուր տեսաւ թէ մատղաշ զիտահասակ մանուկներ կը քնանային այնպիսի տեղեր որ անոնց քչիկ մը ապաստան կը հայթայթէին։ Ամբողջ գիշերը այսպէս պտտելով անցուց։ Այդ գիշեր ինքզինքը այդ մանուկներու նուիրեց, և այդ հազարաւոր լքեալ աղօց հոգը իր վրայ առաւ։

Աշխարհս չի կրնար իր վերքերէն բուժուիլ, որչափ ատեն որ ասոնք մեր սրտերուն մէջ չեն բանար համապատասխան վերքեր։ Չեր տեսած պէտքերը և կարօտութիւնները պէտք է որ կրէք։ Գիտեմ որ ասիկա ձեր սրտերը պիտի ճմլէ, սակայն անոր մէջ պիտի գտնէք մեծագոյն հաճոյքը։

Չիմաստանի մէջ ժանտախտ մը երեւան ելաւ, որու համար դարման մը չէր գիտցուեր։ Ամերիկացի բժիշկ մը աշխատեցաւ, տքնեցաւ մինչև որ հիւան-

դուժեհան մանրէն գտաւ: Մանրէն զըտած էր, սակայն դարմանը ինք մինակ գտնելու անկարելիութեան առջև կը գտնուէր, ուստի որոշեց մանրէն Միացեալ Նահանգներ տանիլ: Սակայն ո՛չ Ձինու կառավարութիւնը արտօնեց անոր (մանրէի) արտածումը, ո՛չ ալ Ամերիկեան կառավարութիւնը՝ անոր ներածումը:

Իր գտած մանրէն Հիւսիսային Ամերիկա տանելու միջոց մը գտնելու մէջ յուսահատած, իր տունը վերադարձաւ, մանրէն կլլեց և իր հայրենիքը մեկնող առաջին շոգեհաւը առաւ: Ճամբու ընթացքին մանրակրկիտ մէկ արձանագրութիւնը կատարեց հիւանդութեան բոլոր նշաններուն դորս ինք իր վրայ կը նշմարէր: Երբ Պալթիմօր հասաւ, գիտակցութիւնը կորսնցնելէ առաջ, իւր նօթերը յանձնեց իրեն սիրելի բժիշկներու, յանձնարարելով միևնոյն ատեն որ բոլոր կարելին ընեն այդ հիւանդութեան դարման մը գտնելու համար: Ինք փրկուեցաւ, և քիչ ժամանակ առաջ նորէն Ձինաստան մեկնեցաւ այդ ահռելի ժանախտին դարմանը իրեն հետ տանելով: Ան՝ Ձինացիները այդ հիւանդութենէն ազատելու միջոց մը փնտռելը իր վրայ առած էր:

Յուշովի գերեզմանատունը հօթը շիրմներ կան՝ որոնք գեղեցիկ պատմութիւն ունին: Ասոնցմէ հինգը կը պատկանին ամուլի մը և անոնց երեք որդիներուն, որոնք Ձինաստան գալին Ձինացի ժողովուրդին ծառայելու նպատակաւ և ըմբոստութեան մը միջոցին սպաննուեցան: Միւս եղբայրները անոնց ահռելի մահուան ակահատիս և զան: Որոշեցին ստանալ լաւագոյն կրթութիւնը և վերադառնալ ծառայելու քաղաքին որ իրենց սիրելիները մեռցուցած էին: Եւ այդ քաղաքը հտեկան, և անոր ծառայեցին, մէկը իբր բժիշկ, միւսը իբր գաստիարտի, եր-

րորդը իբր հիւանդապահ, և չորրորդը իբր հովիւ:

Միւս երկու շիրմները կը պատկանին երկու քոյրերու որոնք ևս միևնոյն խռովութեան պահուն սպաննուած են: Իրենց մայրը Աւստրալիա էր, և երբ իր դուստրերուն մահուան բօթը ստացաւ, (այդ ատեն 62 տարեկան էր) իր բոլոր ունեցածը ծախեց և եկաւ իր դուստրերուն սպաննուած տեղը: Հոն լեզուն սարկեցաւ և դպրոց հիմնեց ուր աշխատեցաւ մինչև իր մահը որ պատահեցաւ քսան տարի յետոյ:

Երբեք չպիտի մոռնամ իմ մէկ վարժուհիս: Ան ստանձնեց իր լուսնոտ եղբայրը հոգալու պարտականութիւնը և այդ պատճառաւ չ'ամուսնացաւ: Միշտ կարօտեալներու համար բան ֆը կ'ընէ: Երբ ևս զԱստուած կը փնտռէ, եկաւ, ձեռքը ուսիս դրաւ: Երբեք այդ պիտի չ'մոռնամ, սակայն ամէնուն համար կ'ընէ այդպէս: Լուրի կեանք է, թերևս ինք իսկ գիտակից չէ կատարած բարիքներուն: Սակայն ևս երբ քաղաք կ'երթամ անպատճառ առաջին անգամ իրեն կ'այցելում: Կարեւորութիւն չ'ունի թէ որո՞նք ինձ կ'սպասեն, և կամ ուրո՞նք զիս են հրաւիրած: Ամէնէն առաջ զինք տեսնելու կ'երթամ:

Պենարէսի մէջ փարիաներու թաղ մը կայ: Մի քանի տարիներ առաջ Օքսֆորտէ շրջանաւարտ երիտասարդ մը իր կեանքը անոնց նուիրեց: Անոնց կ'ընկերանար իրենց հարսնիքներուն և այլ խնճոյքներուն մէջ՝ մինչև առաւելու ժամը երեքին կամ չորսին՝ զանոնք գինովնալէ զուլայնելու համար: Այս փարիաներուն մի քանի հազարներ ազէկ քրիստոնեաներ կ'ընէ:

Մեծ պատերազմի սկիզբները երեք հարիւր Հնդիկներ (Հինաու) Միջագետք գալին բռնակի մէջ աղքատաւորի ցած պաշտօնը կատարելու: Աստուածաբանական քննարանի երկրորդական ուսու-

նող մը տնոնց ընկերակալ ուզեց իբրեւ կեղեցակահալ։ Սակայն միտքուեցաւ տեղւոյ չգոյոթեան պատճառաւ։ Վերջապէս ամէն կողմանէ յուսահատած, այսպէս ըսաւ։ «Եթէ իբրեւ կեղեցակահալ դիտողիկէ չեն ուզեր, իբրեւ կամաւոր աղքատ հաւաք պիտի առաջարկեմ ինքզինքս։» Այդպէս ալ ըրաւ։ Անոնց խոնարհ կեանքին մասնակից եղաւ։ Զանոնք փորձութեան մէջ ինչուէր արդիւնելով առնոց ճշմարիտ կողմը հղաւ։ Եւ զանոնք ետ շնորհաստան բերաւ։ Այս մարդը փնտռեցի, իրեն հետ ծանօթանալ ուզեցի։ Ուզեցի որ Քրիստոսի մասին ինծի բան մը սորվեցնէ։

Հեռուն սարի մը վրայ Հոովմէացի գինուորները խաչ մը տնկեցին։ Առաջ խաչեալի մէկ ձեռքը գամեցին։ Յետոյ միւսը, այն ձեռքը որ մանկանց զլխուն վրայ դրուած էր զանոնք օրհնելու, որ կոյրերուն տեսութիւն պարզեւած էր, որ բոլորներուն պիղծ մարմիններուն զպած էր։ Հոն խաչի վրայ ժամերով կախեալ մնաց։ Եւ ինչո՞ւ համար այսքան տանջանք, այսքան չարչարանք։ Որովհեւ տեւ Ան իր վրայ առաւ, Ան կրեց։

Ինչո՞ւ այդ խաւարը որ Քեզ կը պատէ։ Իմ վրաս ինկած ըլլալու էր այդ։

Անոր հառաչանքը լսեցի—«Ինչո՞ւ գիտ լքեցիր»։ Ես այդպէս հառաչելու էի։

Այդ քու տեղդ չէ իմ տեղս է։

Մենք ի՞նչ պիտի ընենք։ Մեր վրայ պիտի առնենք։

Մենք. թարգմանչին.—Սթանլի ձոն» Հընդհատանի ծանօթ Միսիօնարներէն է, որ «The Christ of the Indian Road» և «The Round Table» անունով գիրքերը գրեց որ անգլիական քրիստոնեաներուն կողմանէ շատ հաճելի ընդունելութիւն գտան, և մի քանի տըպագրութիւններ ունեցան, ուրիշ ընդունելու ալ թարգմանուած են։ Վերջիւ «The Christ of Every Road» լոյս տեսաւ, որ կ'ըստի թէ նախկինները շատ կը պերագանցէ։ Երկու տարի առաջ Արխէնթիւնան այցելեց և շարք մը քարտզներ տուաւ, քարտզներուն էւ ուսեալ դասակարգերու։ Իր կեանքը վերը գրուածներու ճշմարիտ արտացոլացումն է։ Մի քանի տարի առաջ Մեթոական Եպիսկոպոսական Եկեղեցւոյ ընդհանուր ժողովը գինք միաբանութեամբ ընդհանուր Եպիսկոպոս ընտրեց, որ Մեթոական Եկեղեցւոյ պարգեւած ամենամեծ պատիւն է։ Սակայն ինք մերժեց, ըսելով թէ Աստուած գինք կանչած էր թշուառ Հնդկներուն հետ Քրիստոսի մասին խօսակցելու, և ատոր հաւատարիմ մնալ կ'ուզէ։

ՔՐԻՍՏՈՍ ՄԵՐ ՕՐԻՆԱԿԸ

Թարգմ. Վեր. Եղիմ. Ա. ՔԱՍՈՒՆԻ

Օրհնեալ փրկիչս ու Տէրս Յիսուս,
Պօղոսներդ լոյս կուտան ճամբուս.
Բայց օրինակ է կեանքդ ինծի
Գրծուած գրեթով զոհար թսկի։

Ճշմարտութիւնդ, հոանդդ անհուն
Եւ Հօրդ կամքին հնազանդութիւն,
Սէրդ, հեղութիւնդ աննըման
Թող իմ կեանքիս մէջ մարմնանան։

Լեռն ամայի, մութ կէս գիշեր
Ունկընդրեցին քու աղօթքներ.
Անպատենք վրկայ հղան
Բու փորձութեանց և յաղթութեան։

Տէր օրինակս ես ճշմարիտ,
Փոխուիմ յաստիս լոյս պատկերիդ.
Գառն Աստուծոյ, քեզ հետեիմ,
Ետքն ալ երեսդ տեսնեմ, հըրճուիմ Ամէն

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Լոնտոնի մէջ երեք անիւով ինքնաշարժ մը հնարուած է որ բանակին կողմէ կը գործածուի և միեւնոյն ատեն շատ ալ արագընթաց է :

Լոնտոնի մէջ գործիք մը հնարուած է որ գետնի տակ գտնուած խողովակներուն ծակերը և անոնց ուղղութիւնը կը ցուցնէ : Այս գործիքը նաեւ զիւրաւար է և՛ կ'ըսուի թէ կրնայ խորունկ խողովակներուն մեջէն ձայները արձանագրել :

Մինչեւ հիմա տեսութիւն մըն էր գիտուններուն համար թէ ելեքտրոնները մեծ արագութեամբ տարրի մը շուրջ կը դառնային : Բայց հիմա ասիկա իրական կը նկատուի, որովհետեւ երկու մեծ գիտուններ Քալիֆորնիայի մէջ Ք. ճառագայթով կրցան ելեքտրոններուն պատկերը առնել :

Գերմանիոյ մէջ ելեկտրական ուժով հողը կը տաքցնեն և այսպէս առատ բերք կ'ստանան :

Նշանաւոր գիտուն մը գանազան փորձեր կատարելէ վերջ կ'ըսէ թէ՝ ով կիսնոսնորուն ջուրը աշխարհիս կեդրոնին շուրջ շրջան կ'ընէ այն անթիւ խոռոչներուն միջոցաւ՝ որոնք ովկիանոսի յատակէն գէպի կեդրոն կ'երթան : Հասարակածին քով ջուրը գէպի երկրիս կեդրոնը կը ծծուի, բայց ետքը կը քլշուի հիւսիսային և հարաւային բևեռները : Այս երկրաբանը կը կարծէ թէ՝ աշխարհիս ներսիզին կը բաղկանայ կապային շոգիէ, ձեւընկալ կազուղ նիւթերէ, և հաստատուն մարմիններէ : Նաեւ կ'աւելցնէ թէ՝ 57 խոռոչների հասարակածի կեդրոնն են որոնց խորութիւնը 18000 ֆէթն ալ աւելի է :

Արդեօք ինչե՞ կազմուած է Լուսինը : Յարգ սրտ պատասխան մը չէ տրուած այս հարցման, բայց աստղաբաշխները շնորհիւ իրենց զգայուն գործիքներուն,

ներկայիս սկսած են լրիւ ուսումնասիրել լուսինը :

Առաջ կը կարծուէր որ լուսնի մակերեսին վրայ պազալթ կը գտնուէր որ՝ կը ցուացնէր արեւուն լոյսը : Սակայն հիմակուան զիտունները կ'ըսեն թէ՝ պազալթը լուսնի վրայ գոյութիւն չունի : Լուսնի մակերեսը ծածկուած է ոչ թափանցիկ տարրերով եւ որոնք կը ցուացնեն արեւու ճառագայթները :

Միջին դարու ծովահէնները երբ մեծ գանձ մը կը գրկէին սովորութիւն ունէին զայն հեռաւոր կղզիի մը մէջ ամփոփելու : Ներկայիս Քալիֆորնիա կը գրին մէջ արթընէ դրամներ հոս հոն, ցիրուցան կը գտնուին : Մարդիկ հետեւելով այս դրամի կտորներուն մեծ և շատ արժէքաւոր պահուած գանձեր կը գտնեն, որոնց մէջ երեսունէ աւելի դրամի տեսակներ կան :

Մարդիկ մինչեւ հիմա հիւս. բեւեռ գացած էին սաւառնակով, սահնակով և նաւով : Բայց Սըր Ժորժ Հիւպըրթ և իր ընկերները սառուցաբեկ ընդծովայով պիտի ընթանան գէպի հիւս. բեւեռ : Այս ընդծովեան թէ՛ իր առջեւ և թէ՛ յետակողմը սրածայր գործիքների, որոնք կը ծառային սառույցը ճեղքելու : Առջևի սրածայր գործիքը, 18 ֆտնաչափ պիտի մխրճուի մէկ երկվայրկիսի մէջ : Ընդծովեան կրնայ հարիւր ոտք խորնկութիւնէ ալ օգ ծծել :

Գերմանիոյ մէջ նոր տեսակ մը ձայնագրի փշափ հնարուած է, որ խաւաքարէ շինուած է, շատ լաւ կը գործէ և շատ ալ աժան է :

Վիէննացի քիմիագէտ մը տեսակ մը լուցկի հնարած է, որը 200 անգամ կըրնայ բռնկիլ եւ որուն մեծութիւնը հասարակ լուցկիի մը չափ է :

Լոյսի արագութիւնը չի փոխուի : Գերմանացի գիտուն մը նուրբ գործիքով մը կրցաւ ճառագայթի մը մէկ հազարերորդը չափել : Յետոյ քննութեան

ԲԱՅ ՆԱՄԱԿ

ՊԱՏ. ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ. ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅ ԱՒԵՏ. ՄԻՈՒԹԵԱՆ

Սիրելի եղբայրներ,

Հետեւելալ երկու կէտերուն Ձեր ուշադրութիւնը կը հրաւրենք, որպէս զի թէ՛ Աստուծոյ Թագաւորութիւնը սիրողներուն կասկածն ու թիւրիմացութիւնը փարատին — քանզի այս պատճառաւ ցաւալի է որ ոմանք եկեղեցիներէն կ'ուծանան եւ դուրսը անջատ մարմիններ կը կազմեն — եւ թէ՛ մամուլի միջոցաւ տեղի անտեղի քննադատութեանց առիթ չտրուի:

Ա. Արդեօք ժամանակը հասած չէ՞, որ Սուրբոյ Աւետ. Միութիւնը իր հաւատոյ հանգանակը որոշ ձեւով եւ պաշտօնապէս յայտարարէ: Նախկին Կիւիկիոյ Միութեան հանգանակը, որ էսպէս նիկիականին վրայ ձեւուած է, Սուրբոյ Միութեան կողմէ՛ ալ ընդունուած է: Ժողովականութեան մէջ իւրաքանչիւր տեղական եկեղեցի անկախ կը նկատուի. բայց յարմար եւ օգտակար չըլլա՞ր որ ամէն հոգեւոր գործիչ հարկադրուի որոշ հանգանակ մը ստորագրելու եւ այս կերպով մեր եկեղեցիները պաշտօնապէս Միութեան կապուին, որպէս զի մեր կարգ մը եկեղեցիներուն մէջ ծագած դժուարութիւններուն առիթ չտրուի: Մինչեւ որ Մայր Եկեղեցիին մէջ հիմնական եւ որոշ բարեկարգութիւն կատարուի, Աւետ. Եկեղեցիին անջատ դոյրթիւնը անհրաժեշտ է մեր ժողովուրդին հոգեօր եւ մտաւորական զարգացումին համար: Ուրեմն ընդհանուրին օգտին համար ան-

հրաժեշտ կը թուի, որ Աւետ. Եկեղեցին հասկնալի կերպով բացատրէ՝ թէ ինք հաւատարիմ է այն նպատակին՝ որուն համար հիմնուած է, եւ այն Հաւատոյ Հանգանակին՝ որ ընդունուած է իր սկզբնաւորութեան չրջանին: Արդեօք օգտակար չըլլա՞ր որ բացորոշ կերպով յայտնուի թէ ինչպիսի՞ Փրկիչ մը եւ փրկութիւն մը ըսել կ'ուզուի, երբ ըսուի որ Աւետ. Եկեղեցիին նպատակն է մեղաւորները հաւատքի միջոցաւ Քրիստոսի փրկութեան առաջնորդել: Անոնք որ Աւետ. Եկեղեցին քննադատելու համար պատրուակ կը փնտռեն թող տեսնեն թէ այդ եկեղեցին տակաւին ամբողջութեամբ պահպանողական է, Աւետարանի հիմնական վարդապետութեանց կը հաւատայ եւ իբր եկեղեցիի եւ կեանքի կանոն միայն Աւետարանը կը ընդունի:

Բ. Աթէնքի Կրօնից Դպրոցը (The School of Religion) Սուրբոյ Աւետ. Միութեան կողմանէ դաւանապէս հաստատուած է: Մեր եկեղեցիներուն մէջ գործող քարոզիչներն ու գործիչները այդ դպրոցէն կ'ուզուին եւ կամ անոր կողմանէ կը յանձնարարուին. ուստի ըսուենք ունինք հարցնելու թէ այդ դպրոցին առողջ ուսումին մասին Միութիւնը կատարեալ համոզում մ'ունի՞, Քանզի անուրանալի է որ տսիկա մեր եկեղեցիներուն համար կենսական հարց մ'է: Իր առած անունէն ալ յայտնի է որ յիշեալ հաստատութիւնը աստուածաբանական դպրոց մը չէ, եւ ոչ աւետարանական երկրասարգներն ալ իբր աշակերտել'ընդունի՝ անոնց դաւանանքն ու հաւատալիքը առանց նկատի առնելու: Ուրեմն յարմար եւ անհրաժեշտ չէ՞ որ մեր մէջ գործող ատկէ ուսումնա-

նեթարկելէ վերջ սա եզրակացութեան կը յանգի թէ՛ լոյսի արագութիւնը միօրինակ է:

Հաւաքեց՝ ՀԱՅ ԳՕԼԱՏԵԱՆ

ւարտ երիտասարդներուն հաւատոյ հանգանակները և քրիստոնէական փորձառութիւնները Միութիւնը քննէ իրաւասու մարմնի մը միջոցաւ, և երբ անոնք գոհացուցիչ գտնուին ա՛յն առին իրենց սրտշուած գործերուն ձեռնարկեն, որպէսզի ապագայ հաւանական զժողաւրութիւններու առջեւ առնուի իցիւ թէ յառաջիկայ Միութեան ժողովին մէջ այս հարցերը վերջնականապէս որոշուէին. իցիւ թէ Միութիւնը իր սեպհական Աստուածաբանական ձեռնարանը ունենար:

Ադիսաբեյրութ

Յարգանքներով
(Վեր.) Ս. ՄԵԼԴՈՆԵԱՆ

ԱՌԵՏ. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱԼԷՊ, Քաղաքի Հայ Աւետ. Եկեղեցիին մէջ, Մարտ 22 ին, Կիրակի իրիկունան քարոզէն վերջը Տր. Պէլ, Ամերիկեան Ս. Գրքի Ընկերութեան արաբախօս երկիրներու գործակալը, մի քանի վայրկեան խօսեցաւ և ի մէջ այլոց ըսաւ. «Կաթոլիկ քահանայ մը Լոնտոնի մէջ Ս. Գրքի Ընկերութեան շէնքերը պարտելէ հաջորդաւ որ քրիստոնէական աշխարհի երկու հրաշալիքներէն մէկն է Վատիկան և երկրորդը՝ Ս. Գրքի յատուկ այս կազմակերպութիւնը: Ես, սակայն, կը ներկայացնեմ Ամերիկեան Ս. Գրքի Ընկերութիւնը, որ 115 տարուան պատմութիւն ունի: Այս վերջինը մինչև հիմա Ս. Գրքը 800 տարբեր լեզուներու թարգմանած է և ամէն տարի 200 լեզուներով զայն կը տպէ ու կը հրատարակէ: Արաբախօս երկիրներու մէջ 260 000 Ս. Գրքի հատորներ և կտորներ ծախուած են անցեալ տարուան միջոցին: Սուրիահայերուն ծախուածներն ալ այս թիւին մէջ են: Ս. Գրքը Հայերուն կը ծախուի իր արժած գինին մէկ քառորդովը

կամ մէկ երրորդովը: Ընկերութեան մեծագոյն մէկ զժողաւրութիւնն է աւետարանչական հոգիով լեցուն ծախողներ գտնել:»

Պէթրոսի Հայ Աւետ. Ա. Եկեղեցիէն կը գրեն. —

Տարեկան գրեթէ բոլոր եկեղեցական ժողովներու ընտրութիւնը տեղի ունեցաւ: Մօտ 80 քոյր և եղբայրներ եկեղեցիին գանազան գործերուն մէջ կը գործեն:

1930 տարուան գրամական հաշիւները բիմէն ժողովուրդին կարգացուցան: Շատ քաջալերական էր լսել թէ ժողովուրդը սա տնտեսական տագնապին մէջ իսկ նախորդ տարիներէն աւելի տուած էր թէ՛ հոգեւոր տուրքի և թէ՛ ալ բարեսիրական նպատակներու համար:

Եկեղեցին պաշտօնապէս կազմակերպեց հետեւեալ երկու ընկերութիւնները. «Կրթասիրաց»ը, որուն նպատակը պիտի ըլլայ՝ եկեղեցւոյ ազգատու սանոցներու դաստիարակութեան օգնել: «Դայլիկ» սկսուտական ընկերութիւնը, որ կազմուեցաւ Տղոց Ջանասիրացի նախաձեռնութեամբ, անգամները կրթելու ֆիզիքապէս և բարոյապէս:

Պէյրութի Հայ Աւետարանական համայնքին Բարձր. Վարժարանին չըջանաւարանները առանց քննութեան Ամերիկ. Գուէճի-սըպ ֆրէշմէն կարգին, իսկ քննութեամբ ֆրէշմէնի կ'ընդունուին:

Յիշեալ զպրօքը, Հոգաբարձութեան նախաձեռնութեամբ և Ուսուցչական կազմին օգնութեամբ, Փետր. Վերջը տուաւ հրապարակային հանգէս մը: Գնահատանքի արժանի էին, առաջին կարգի ուսանողներուն Հայերէն, Անգլիերէն, Ֆրանսերէն, և Արաբերէն լեզուներով արտասանութիւնները:

Ամսոյն 9 ին, Ուրբաթ երիկոյն Եկեղեցւոյ Հօտարանական Վարչութիւնը դարձեալ սարքեց իր հրապարակային

ժողովը: Բանախօսն էր, եկեղեցւոյս անդամներէն Տօքթ. Գ. Վարդապետ-
եան: Իր «Բժիշկ հասնելէն առաջ լինչ
պէտք է ընել» հետաքրքրական նիւթով
և պարզ ու հասկնալի ոճով և զուար-
ճախօտութեամբ շատ օգտակար հան-
դիսացաւ ներկաներուն:

ՀԱԼԷՊ, քաղաքի Հայ Աւետ. Եկեղե-
ցիին մէջ, Մարտ 29ին Կիրակի կէսօրէ
հօքը, աննախընթաց մկրտութեան ա-
րարողութիւն մը կատարուեցաւ: Ֆը-
րանսական բանակին մէջ Մատակա-
քարցի Բող. Ղինոսոր մը իր կռապաշտ
ընկերներուն վրայ այնքան գեղեցիկ
տպաւորութիւն կը ձգէ որ անոնք, թի-
ւով եօթը, իրենց կուսքերը կը թողուն
և քրիստոնեայ ըլլալ կ'որոշեն և մկրտ-
աւելու համար հովիւին կը դիմեն:
Վեր. Կ. Յարութիւնեան զանոնք կը
քննէ, Աստուծոյ վրայ անոնց հաւատքը,
քրիստոնէական կրօնքին հանդէպ սէրը
գոհացուցիչ կը գտնէ: Արարողութեան
պահուն անոնցմէ ամէն մէկուն անուն-
ները յիշելով զանոնք կը մկրտէ: Հո-
վիւին ֆրանսերէն լեզուով կարդացած
հաւատոյ հանգանակը մակաշիբէնի կը
թարգմանուի որ մկրտուողները զայն
հասկնան: Տր. Ճ. Մէրիլ այս դէպքի
արժէքին և կարեւորութեան մասին մի
քանի վայրկեան խօսեցաւ և ազօթքով
զանոնք Քրիստոսի յանձնեց: Ապա
ներկայ եղող Մատակաքարցի ղինոսոր-
ները իրենց լեզուով մկրտութեան երգ
մը երգեցին:

ՃԱՐԱՊԼՈՒՍ այցելած է Վեր. Ա. Շի-
րաճեան Մարտ 21-23ին և հոն երեք
կրօնական պաշտօններ կատարած է:
Ճարապուստի բնակչութեան թիւն է
2,500, որուն 500ը՝ Իսլամ: Աւետ. հա-
մայնքը կը բաղկանայ 20 ընտանիքնե-
րէ, մեծ մասամբ պէրէճիքցի. ունին
60 աշակերտներով դպրոց մը:

ԱԶԳԱՊԵՏԱՐԱՆԻ խնդրին համար
Պէյրուսի մէջ Մարտ 9-11ին տեղի ու-

նեցած նիստին մասնակցելու համար
Վեր. Շիրաճեան հոն գացած է:

ՄԱՍՍՄ ՆՈՐԱ ՇՈՎԷՆ, դուստրը բը-
ժըշկագետ Ա. Ա. Ալթունեանի, քաղա-
քըս ժամանած է Մարտ 21ին: Բարե-
գուլուստ կը մաղթենք:

ՀԱԼԷՊ, քաղաքի Հայ Աւետ. Եկե-
ղեցիի վարիւսրահին մէջ, Մարտ 28ին,
շարժապատկերի ներկայացում տրուած
է մասնաւորապէս հրաւիրեալ բազմու-
թեան. և այս առթիւ դպրոցական շէն-
քի մը պէտքը շեշտուած, և այս նպա-
տակաւ ներկաներէն 100 օսմ. ոսկիի
հանգանակութիւն մը կատարուած է:

ՀԱՍԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ԻՐԱԿԻ հայերուն թիւն է մօտ ինը
հազար, 4500 Պաղտատի մէջ, 1500 Մու-
սուլի մէջ, 1000 Պասրա և 2000 ցրուած
այլեայլ տեղեր: Պաղտատի մէջ կան
երկու Առաք. Եկեղեցիներ. Ազգ. վար-
ժարանները կը պահուին եկեղեցիի հա-
րուստ կալուածներու հասցիներովը:
Տնտեսապէս լաւ են: Վերջին անպատ-
ուարեր դէպքերը այս գաղութին ալ
հանգիստը վրդովեցին: Քրիստոսէ դա-
րեր առաջ Հայեր ապրած են Իրազի
մէջ: Նոր գաղութը կազմուած է Ժէ.
դարուն, երբ 1638ին Սուլթան Մուրատ
Դ. Պաղտատը գրաւեց: Ժէ. դարուն մէջ
Պասրայի հարուստ Հայ գաղութը բաղ-
կացած էր 800 ընտանիքներէ:

ԷՏԿԱՐ ՇԱՀԻՆ, նշանաւոր Հայ նը-
կարիչը, անդամ ընտրուած է Ֆրանսա-
յի Գեղարուեստից Ազգային Ընկերակ-
ցութեան վարիչ մարմին:

ՓՐՈՖ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԱՐՏԻՉԵԱՆ
Միլանի համալսարանին մէջ մանկա-
բարձութեան ուսուցչապետ—դասախօս
կարգուած է: Փրոֆ. Պարտիզեան Մու-
րատ Ռափայէլեան վարժարանի նախ-
կին սաներէն է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ բնակչութեան թիւը բարձրացած է մէկ միլիոն 5000: Վերջին տարուան միջոցին 116000 մանուկներ նախնական վարժարաններուն, 1400 ուսանողներ համալսարանին յաճախած են: 35000 մանուկներ «Նախադպրոցական ցանցի տակ» առնուած են:

ՍԵԼԱՆԻԿԻ մէջ Յոյն և Հայ Միութիւն մը կազմուած է երկու ժողովուրդներու յարաբերութիւնները ամբողջութեամբ համար: Այս առթիւ սարքուած հանգէսի մը մէջ ներկայ եղած է Սելանիկի կառավարիչը, խօսած են Պր. Մալաքեան, Փրոֆ. Փափատոփուլոս և երեսփոխան Մեսիպօղլու:

ՊՈՍԹՈՆ քաղաքի վերջին 50 տարուան պատմութիւնը պիտի գրուի հովանաւորութեամբ քաղաքապետարանի: Տօքթ. Հ. Ս. Ճէլալեանէ խնդրուած է քաղաքի հայերուն և ուրիշ Արեւելացի քրիստոնեաներուն յատկացուած գլուխը գրել:

ՃԱՐՏԱՐԱԳԻՏ Պ. ՍՈՒՍԱՆԵԱՆ երկար փորձերէ ետքը յաջողած է նախքան օճառ շինել, որ կատարելապէս կը գոհացնէ փնտոռուած յատկութիւնները:

ՎԱՐԴԱՆ ՄԱՍՈՍԵԱՆԻ, հռչակաւոր ծովանկարիչի, վերջին անգամ ցուցադրած նկարները մեծ գովեստի արժանացած են ֆրանսական մամուլի մէջ:

ԼՈՆՏՈՆԻ մէջ տեղի ունեցած Պարսկական արուեստի ցուցահանգէսին մասնակցած են Տիարք Կամսարական, Ե. Սազըզ, Ե. Պէկեան, Յ. Ինճուեան, Վ. Իսպիրեան, Տ. Խան Քէլէկեան ևայլն: Հայկական կտորները կարեոր տեղ գրաւած են ցուցադրուած գորգերուն մէջ: Կազմակերպիչ Մասնախումբին մէջ կը գտնուէին մասնագէտ հայեր:

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ քրդախօս շրջանէն 80 հայեր ևս հասած են Գամբըլը վերջին 2-3 շաբթուան միջոցին:

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԿՈՒԶԵՍ

Դիմէ մեր խանութը և անկէ պիտի գտնեա պէտք եղած զանազան տեսակներով և լիզուներով:

Հետեւեալ հին և նոր գիրքերը կը յանձնարարուին ընթերցողներու. —

Մարգուլ Սիրտը

Ծնունդի Երգը

Ամենօրեայ Լոյս, Առաւօտ

Ամենօրեայ Լոյս, Իրիկուն

Էտկարի Բարի Լուրը

Հակառակ Որդիներ

Ճօրճ Միւլը

Անապատի Եկեղեցի

Բարեկամութեան Հերոսներ

Սուրբ Պատեհազմ

Վերստին Ծնունդ

Հայաթ Եարըլը

Մէսուտ Էօմր

Պէրահին ի հազիգաթ

Խրիսթիան Թախմաթը

Ք. Մուգատտէսին Միւլէլիֆի

Եւ ուրիշ շատ մը կենսագրութիւններ, պատմութիւններ, վէպեր, կրօնաբարոյական, առողջապահական գիրքեր, գասագիրքեր, հայերէն, հայատառ թրքերէն, արաբատառ թրքերէն, լատինատառ թրքերէն, ֆրանսերէն, անգլիերէն լիզուներով:

Եթէ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԻԼ ԿՈՒԶԵՐ. —

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈԶՆԱԿ»

«ՆՈՐ ԱՒԵՏԱՔԵՐ»

«ՐԱՀՆԻԻՄԱ»

«ԲԱՆԲԵՐ»

Դիմեցէք՝ Ձերչեան Գրատուն
LIBRERIE CHERCHIAN
Bewabet-el-Kassab No. 63
Aleppo, Syrie

صاحب الامتياز والمدير المستول
القاسم ق. هاروتونيان